«ՀԱՅԱՆՏԱՌ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Տնօրեն
«АРМЛЕС»
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ
Директор
«HAYANTAR»
STATE NON COMMERCIAL ORGANIZATION
Director

№ 11-10/04

«10» «01» 2024թ.

0011, ք. Երևան, Ա.Արմենակյան 129
0011, Армения, г. Ереван, А. Арменакяна 129
A. Armenakyan 129, Yerevan, 0011, Armenia
Էլ.փոստ՝/e-mail:/эл.почта:info@armforest.am
Հեռ.՝/tel:/тел: 010/65-37-16, 010/65-02-35

ՀՀ ֆինանսների նախարարության
գլխավոր քարտուղար պարոն Կարեն Սարգսյանին
պատճենը՝ «ՀԱՄԱԶԱՍՊ ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՇՈՏԻ» ԱՁ-ի տնօրեն
Համազասպ Հովսեփյանին
Հասցե՝ ք. Երևան, Բաղրամյան 46, ԲՆ 4Ա

ՈՐՈՇՈՒՄ
«ՀԱ-ԳՀԱՊՁԲ-2023/82» ԾԱԾԿԱԳՐՈՎ

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑ «ՀԱՄԱԶԱՍՊ ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՇՈՏԻ» ԱՁ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգով անտառվերականգնման և անտառապատման աշխատանքներ կատարելու համար ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱ-ԳՀԱՊՁԲ-2023/82» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ: Նշված ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել թվով 10 (տասը) մասնակից, այդ թվում՝ «ՀԱՄԱԶԱՍՊ ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՇՈՏԻ» ԱՁ-ն (հայտը կցվում է):

2023 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 3 արձանագրությամբ 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից է ճանաչվել «ՀԱՄԱԶԱՍՊ ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՇՈՏԻ» ԱՁ-ն (արձանագրության պատճենը կցվում է):

2023 թվականի նոյեմբերի 21-ին «ՀԱՄԱԶԱՍՊ ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՇՈՏԻ» ԱՁ -ի հետ կնքվել է N«ՀԱ-ԳՀԱՊՁԲ-2023/82-1» պայմանագիրը (պատճենը կցվում է):

Ապրանքի մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել պայմանագիրը կնքելուց հետո 20 (քսան) օրացուցային օրը՝ 11.12.2023թ.: Համաձայն պայմանագրի 2.1.1 կետի՝ գնորդն իրավունք ունի վաճառողի կողմից 10 (տասը) օրացուցային օր մատակարարման ժամկետը խախտելուց հետո հրաժարվել ապրանքն ընդունելուց:

«ՀԱՄԱԶԱՍՊ ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՇՈՏԻ» ԱՁ -ին բազմիցս բանավոր կերպով տեղեկացվել է հետևանքների մասին, սակայն, անգամ 2023 թվականի դեկտեմբերի 25-ի դրությամբ մատակարարում չի կատարվել, ինչի մասին փաստում է պատասխանատու ստորաբաժանման ղեկավար Տարոն Մանուկյանի 2023 թվականի դեկտեմբերի 25-ի զեկուցագիրը (պատճենը կցվում է):

2023 թվականի դեկտեմբերի 27-ին «ՀԱՄԱԶԱՍՊ ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՇՈՏԻ» ԱՁ -ին պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցվել է փոստային առաքման և

էլեկտրոնային փոստի միջոցով (ծանուցումների, փոստային կտրոնի պատճենները կցվում են):

Միաժամանակ, ծանուցմամբ «ՀԱՄԱԶԱՍՊ ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՇՈՏԻ» ԱՁ -ին առաջարկվել է մինչև 2024 թվականի հունվարի 9-ը ներառյալ վճարել տույժերը, որակավորման և պայմանագրի ապահովումները և վճարված կտրոնների բնօրինակները ներկայացնել «Հայանտառ» ՊՈԱԿ-ի գնումների բաժին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում չներառելու պայմանով: «ՀԱՄԱԶԱՍՊ ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՇՈՏԻ» ԱՁ-ն լինելով պատշաճ ծանուցված՝ չի ներկայացրել կտրոնները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՀԱՄԱԶԱՍՊ ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՇՈՏԻ» ԱՁ-ն խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները և հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում:

Ստորև ներկայացվում են անհրաժեշտ տեղեկությունները՝ համաձայն ձևաչափի

Մասնակցի				
անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը	ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
«ՀԱՄԱԶԱՍՊ ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՇՈՏԻ» ԱՁ -	20181906	Ք. ԵՐԵՎԱՆ Բաղրամյան 46, ԲՆ 4Ա	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	10.01.2024թ. ՀԱ-ԳՀԱՊՁԲ-2023/82

Սույն որոշման կատարման վերահսկողությունը վերապահում եմ կազմակերպության տնօրենին:

Հարգանքով՝
պարտականությունները կատարող Վահրամ Սեդրակյան

Գնումների բաժին
Մանե Խաչատրյան
010304507